

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ  
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**ք. Գավառ**

**03.06.2020թ. Ժամը 14.00**

Նախագահում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 50-ը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզայի վարչության պետ Արթուր Մկրտչյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանը, մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, մարզպետի խորհրդականներ Նարեկ Մանուկյանը և Վահագն Դաբադյանը, մարզպետարանի ՖՍՏ վարչության պետ Յուրա Մուշեղյանը, քաղաքաշինության վարչության պետ Արմեն Զոհրաբյանը, ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Վանիկ Հարությունյանը, ԱՍԱ վարչության պետ Լուսինե Վարդանյանը, քարտուղարության պետ Վ. Ղուկասյանը և տեղեկատվության ու հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հասմիկ Շահբազյանը

**Օրակարգում՝**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ (COVID-19)» նոր տեսակի հիվանդության տարածումը կանխելուն ուղղված աշխատանքներում առկա խնդիրների և ձեռնարկվող միջոցառումների մասին:

2. Այլ հարցեր

**Ելույթներ ունեցան՝**

Կարո Գևորգյան

- Ներքին Գետաշեն համայնքի ղեկավար

Արման Ղազարյան

- Զոլաքար համայնքի ղեկավար

**Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:**

**1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝**

1) աշխատանքներ տանել բացառելու համայնքի տարածքում մարդկային կուտակում ենթադրող միջոցառումները, ժողովներն ու հավաքները, իսկ դրա անխուսափելիության դեպքում թույլ տալ դրանց անցկացումը նվազագույն թվաքանակով մասնակցությամբ՝ մասնակիցների միջև առնվազն 1.5 մետր սոցիալական հեռավորություն պահպանելու պարտադիր պայմանով, անհրաժեշտության դեպքում համագործակցել ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության հետ:

2) հետևել ՀՀ պարետի 03.05.2020թ N 63 որոշման մեջ կատարվող փոփոխություններին և ապահովել որոշման պահանջների կատարումը համայնքապետարաններում և համայնքների տարածքներում.

3) աջակցել ՀՀ Գեղարքունիքի մարզն ընդգրկող 13 գոտիներում ինքնամեկուսացված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող աշխատանքային խմբերին.

4) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 03.06.2020թ. ՍՊ/15.4/14809-2020 հանձնարարականի համաձայն՝ «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ (COVID-19)» համաճարակային իրավիճակով պայմանավորված ժամանակավոր կասեցնել համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու նպատակով հայտարարված մրցույթների անցկացման գործընթացը, միաժամանակ չհայտարարել նոր մրցույթներ.

5) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2020 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման և սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

6) դեռևս չներկայացրած սուբվենցիոն ծրագրերի փաթեթները սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու համար.

7) մինչև 150.0 մլն ՀՀ դրամ նախահաշվային արժեք ունեցող և միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատված համայնքների սուբվենցիոն ծրագրերի գնման հայտերը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան՝ գնման գործընթացը կազմակերպելու համար:

8) համայնքի ավագանու որոշումները ՀՀ օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան.

9) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելու դեպքում մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի չափով:

 Недействительная подпись

X 

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ